

ծովը ցամքեցընելով՝ Մանդերտամ մայրաքաղաքը ողողի։ Սակայն այս տեսակ վախերը մեր օրերը ցրուեցան, ու 1839 տարւոյն սկսան չարէմի լիճը ցամքեցընել։ այսօրուան օրս բոլորովին լմնցաւ գործողութիւնը ու ցամաք երկիր եղաւ այն տեղը։ Այս գործողութեան համար 1835^{էն} ինչուան 1855 տարին ամբողջ՝ 8,981,344 չղանտայի ֆիօրին (որ կ'ընէ 18,399,703 ֆր․) ծախք եղեր է․ ու այս ծախուելու երկրին տարեկան բերքը 8 միլիոն ֆիօրին (17,280,000 ֆր․) գին հաներ են։ Իսկ բոլոր ցամքեցուցած տեղը 18,000 հեկտար՝ է, որուն մէջ հանգիստ կրնան ապրիլ 100,000 մարդ՝ հանդերձ իրենց հարկաւոր եղած անասուններովը․ և հիմա հոս ասդիս անդին կալուածներ սկսան առնուիլ։

Այս դարուս մէջ շատ մտածած են չղանտացիք Սէօիւտէրսէէ ծովածոցն ալ ցամքեցընելու․ թերեւս այդ առաջին յաջող փորձը՝ խորխուսէ զիրենք այն մեծ գործողութեան ձեռք զարնելու։

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ք

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Դ․ Կարին զանազան տեսակի և որակուրեանք վրայ։

Կաթին բաղկացուցիչ նիւթերը, որ տեսակ կենդանւոյն ալ որ ըլլայ, միշտ նոյն են․ միանգամայն խիստ միազանգուած ալ չեն․ անոր համար կաթը կ'ընէն ետեւ քիչ մը ատեն հանգչած դնելով միայն՝ այդ բաղկացուցիչ նիւթերը իրարմէ կը զատուին․ որոնք են՝

Սեր, ուսկից կարագը կը զտուի․

Սակարդ, որ է պանրոյն նիւթը․

Շիճուկ կաթին, կամ ջրեղէն մասունքը։

Կաթը անշարժ զով տեղ մը կենա-

1 Հետեւը չափ մըն է, որ 10,000 քառակուսի միդր կ'ընէ։

լով՝ քիչ ատենի մէջ երեսը կը ծածկուի թանձր թեթեւ իւղային նիւթով մը, որ է սեր ըսածնիս։ Այս սերը կաթին երեսէն առնելէն ետեւ, կաթին մասունքը աւելի կը թանձրանան, իւղային մասունքը պակսելով՝ կաթը քիչ մը գունաթափ կ'ըլլայ։ Իսկ երեսէն առած սերդ ամանի մը մէջ դրած ցնցելով բարեխառն օդոյ մէջ (որ է 12 աստիճան ջերմաչափին), մէկ մասը կը թանձրանայ դեղնագոյն, որ է կարագ․ իսկ մնացած ջրային մասն ալ կը կոչուի կարագի կաթ։ Կաթին սերը առնելէն ետեւ մնացած կաթը երբ թողուս՝ մէջը նիւթ մըն ալ խառնելով, կը թանձրանայ կը պանրանայ, մէջէն կանաչի զարկած դեղնագոյն ջուր մը վազելով, որ կը կոչուի շիճուկ կաթին։ Շիճուկն ալ եթէ եփես, մէջէն կ'ելլէ շաքարային նիւթ մը 1000^{էն} 965 մաս պակսելով և մնալով միայն 35 մաս։

Սխարի կաթը տեսքով կովու կաթէն չզանազանիր, բայց մէջը աւելի կարագ ունի․ և այս կարագին գոյնը գունաթափ դեղին է ու զանգուածը թոյլ, շուտով ալ կը ծթրի։ Այդ կաթին մակարդը առատ է և պարարտ ու հիւթեղ․ և կովուն մակարդին պէս չպնդանար։

Այծին կաթը կովուն կաթէն աւելի թանձր է, բայց ոչխարին կաթէն աւելի ցամաք է, և այծու հոտ ու համ ունի։ Այդ կաթէն քիչ կարագ կ'ելլէ, բայց աւելի շատ պանիր։ Այս կարագը ճերմակ կ'ըլլայ, աւելի պինդ ու քաղցրահամ, և երկար ատեն թարմ կը մնայ։ Սակարդը պարարտ է, թանձր ու հիւթեղ։ Վրսէն թէ ճերմակ և անեղջիւր այծին կաթը քիչ կը հոտի։

Կովու կաթը, որ աւելի գործածական է գրեթէ ամէն տեղ, ոչխարէն քիչ կարագ ունի, բայց այծէն աւելի․ պանիրն ալ նուազ է։ Կովու կաթին բաղկացուցիչ մէջի նիւթերը աւելի դիւրաւ կը բաժնուին իրարմէ։

Նոյ կաթը կանանց կաթին հետ շատ նմանութիւն ունի․ սերը նուազ է և թոյլ․ և մակարդն ալ կովու մա-

կարդէն քիչ է , բայց աւելի հիւթեղ :
Կովու լաւագոյն կաթը ոչ շատ թանձր
կ'ըլլայ , ոչ ալ շատ ջրային . խիստ ճեր-
մակ ու քաղցրահամ : Չ երմաչափը 15
աստիճանէն վեր եղած ատենը՝ քիչ ժա-
մանակի մէջ կը թթուի . իսկ ջերմա-
չափը երբ 20 աստիճան կ'ելլէ , քանի
մը ժամուան մէջ կը թթուի : Երբոր
կաթը այսպէս շուտով կը մակարդի ,
կաթին սերը չկրնար երեսը ժողվուիլ ,
և խառնուելով կաթին հետ՝ ալ չզա-
տուիր :

Կովու կաթերը շատ կերպով կը տար-
բերին իրարմէ . գլխաւորաբար գունով ,
համով , հոտով , թանձրութեամբ և ի-
րենց մէջի մասանցը առաւելութեամբն
ու նուազութեամբն : Եւս տարբերու-
թիւնները կրնան արտաքին պատճառ-
ներէ ըլլալ և կամ կովուն կազմուած-
քէն :

Երտաքին պատահական պատճառ-
ները , որ կաթը կովէն կթելէն ետքը
կրնան զկաթը այլայլել , են օդոյն խառ-
նակութիւնը , չոր կամ մրկալից ըլլա-
լը , գարշահոտ մառախուղը , հոտած
ֆնասակար գոլորշիքները , խոնսու-
թիւնը , գէշ հոտերը , փոշին , և այլն :

Ել աւելի շատ փոփոխութիւն կը կրէ
կաթը կովուն կազմուածքէն : Եւս և
այլ ցեղ կովեր կան , որոնց կաթերը
իրարմէ կը տարբերին . երբեմն նոյն
ցեղի կովերուն մէջ ալ կը գտնուին կո-
վեր , որոնց կաթը ուրիշներէն կը տար-
բերի . նաև մի և նոյն կովուն կաթը
ըստ տարւոյն եղանակին կը փոխուի .
նաև այլ և այլ օր , այլ և այլ անգամ
կթած կաթերը իրարմէ կը տարբերին
հազար պատճառներէ , որ դժուար է
իմանալ : — Գլխաւոր պատճառներն ա-
սոնք են .

Ա . Կենդանոցն Բնական Կազմածքը .
Յայտնի է որ տկար և վատուժ կամ
հիւանդ կենդանի մը աղէկ կաթ չկըր-
նար տալ : Կենդանիէ մը աղէկ կաթ
առնելու համար՝ առաջին պայմանն է
ուժով , առողջ և աղէկ կազմուածքը :
Երբ կենդանին տաքցած կ'ըլլայ , կա-
թը անախորժ և մասնաւոր համ մը կ'ու-

նենայ . նոյնպէս հորթը ծնանելու մօտ
եղած ատենն ալ կաթին որակութիւնը
փոխուած կ'ըլլայ :

Բ . Հասակը . Եր կովուն կաթը տը-
կար կ'ըլլայ : Եւս փորձուած է՝ որ կո-
վը իրեք չորս անգամ հորթ բերելէն
ետե կը սկսի աղէկ կաթ տալ , և այն
կը տեւէ ինչուան որ կովը սկսելով գիր-
նալ՝ կաթը կը քիչնայ , մինչև բոլորո-
վին ալ կը դադրի : Եւս կ'ըլլայ սովո-
րաբար տասներորդ կամ երկոտասանե-
րորդ տարին , կամ եօթը և ութը ան-
գամ հորթ բերելէն ետե :

Գ . Կերակուրը շատ մեծ ազդեցու-
թիւն ունի կաթին վրայ : Եգիպտա-
ցորենի տերեւներն ու կոթերը , կամ
ճակնդեղի շաքար հանելու գործածե-
լէն ետե յաւելուածը կերող կովուն
կաթը անուշ ու շաքարահամ կ'ըլլայ .
իսկ կաղամբի տերեւներով և ուրիշ
դառն տերեւներով սնած կովուն կաթը
անախորժ համ կ'ունենայ : Թաց խոտ
կերողին կաթը ջրոտ և անհամ կ'ըլլայ :
Եարձրացած արօտի մէջ արածող կո-
վուն կաթը համով ու թանձր կ'ըլլայ :
Թարմ խոտ ուտելէն դադրելով՝ թէ որ
մէկէն միայն չոր խոտ ուտելու սկսի ,
քիչ մը ատեն կ'այլայլի կաթը :

Դ . Չորոյն չափն ու տեսակն ալ շատ
ազդեցութիւն ունի կաթին վրայ : Եւս
քուր ջուր և չափով խմցնելը կաթին
լաւութեանը շատ կ'օգնէ :

Ե . Երողջութեան Խնայքը պէտք չէ
զանց առնել : Կովը փափուկ կենդանի
է , ցրտէն պէտք է պահպանել : Եւս փա-
ւոր աշխատանքով , չափաւոր հանգրս-
տեամբ , առողջ բնակութեամբ , մէկ
բնական հանգարտ վիճակի մը մէջ՝ ա-
ւելի ազնիւ ու սերոտ կաթ կու տայ .
իսկ շատ քալող , չարչրկուող , անհան-
գիստ վիճակի մէջ եղող կովը խեղճ
ջրոտ կաթ մը կու տայ : Եւս երբ Եւ-
գղիոյ , Հոլանտայի , Պաւիերայի և
Սաքսոնիոյ մէջ կովերը ձիու պէս ամէն
օր կը սանտրեն , կը մաքրեն և կը լուան :

Զ . Կրեւն Ժամանակը . Գոնէ 12 ժա-
մը մէյ մը պէտք է որ կթուի . որչափ
յաճախ կթուի կովը , այնչափ աւելի

կաթ կու տայ , բայց այնչափ ալ աւելի ջրոտ կ'ըլլայ կաթը : Այս անոր ներհակ եթէ օրը մէկ անգամ միայն կ'ընեն , եօթներորդ մաս մը աւելի կարագ կ'ու- նենայ մէջը : Այս յայտնի է որ առա- ւօտուան կ'ընեն կաթը աւելի թանձր է՝ քան իրիկուան կ'ընեն :

Է . Բնական ինքնա- . Բնական կա- թերը թեթեւ , ջրոտ կ'ըլլան , և տա- րուէ տարի առաջ երթալով կը թան- ձրանայ ինչուան վերջը . այնպէս որ վերջի կ'ընեն լաւ լինին բազմաթիւ- լով , ամենէն քիչ ութն անգամ աւելի սերոտ ու պարարտ կ'ըլլայ . սովորական տարբերութիւնը տասը , տասուերկու անգամ է . ինչուան տանքովեց անգամ առջինէն աւելի պարարտ կաթ բերող կ'ըլլայ :

Ը . Անանկէն երբեք թափանչ առջի տուած կաթը թանձր է , մութ դեղնա- գոյն , և խիստ քիչ սեր ունի մէջը : Այս վտարար կաթը կ'աղէկնայ 12 կամ 15

օր վերջը . և անկէ ետեւ օր օրուան վրայ կը լաւնայ ինչուան ութներորդ ա- միսը և կը շարունակէ :

Թ . Գաղափարն ալ կենդանոյն՝ մեծ ազդեցութիւն ունի կաթին վրայ : Այս օր- թը կը հեռացնեն քովէն ու ինքը հան- դարտութիւնը կորսնցուցած բառաչե- լով կը յայտնէ իր ցաւը , կաթը կը գէշ- նայ . նոյնպէս ալ երբ հեռացնեն զինքը իր ընկերներէն և կամ ախտին մէջ երբ իր տեղը փոխեն , և կամ որ և իցէ կերպով երբ ցաւ մը ունենայ :

Ժ . Երբեք և եղանակ . Երբեք և խոնաւ երկրի մէջ աւելի առատ կաթ կու տան կովերը : Երբեք և քարնան մէջ ձմեռուան եղանակէն աւելի ա- ռատ , սերոտ ու համով կ'ըլլայ կաթը :

Ս . Երբ այս տեղեկութիւններուն վը- րայ եթէ մտադրութիւն ընէ , կրնայ հնարքով իր կովերուն կաթը աղէկցը- նել շահաւոր կերպով :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց Դ Է Պ Ք

Հիմակուան Արեւելեան պատերազմը : (Տես երես 82)

1854

ՄԱՐՏ

23 . Կորչաբով ինչուան իրեք այլ և այլ տեղերէ ռուս զօրքերը Դանուբէն անցնել կու տայ . վաշտ մը Կալաք քաղաքին քով կ'անցնի , որուն կը հրա- մայէր Լուսերս երկրորդ զօրապետը . ուրիշ վաշտ մը Խալաքի քով , որուն զօրավարը ինքն էր , և երրորդ վաշտ մըն ալ Խալաքի քով՝ ընդ տառ- նորդութեամբ Ուսաբով երկրորդ զօրապետին . այս յետին տեղուոյ մէջ Տաշիկները ամենայն ո- գով գէտ կը կենան Ռուսերուն , բայց վերջապէս կը բռնադատուին եւ քաշուիլ ինք թնգանթ թշնամոյն ձեռքը թողով : 24ին ու հետեւեալ օրերուն պատերազմը կը շարունակէ Դուլա , Մալին , Իսապառ ու Հուշով բերդաքաղաքնե- րուն գէտ , որոնք կը հարկաւորին անձնատուր ըլ- լալու , կամ յարձակմամբ կ'առնուին : 30ին Հըռ- շով գարձեալ Տաշիկաց ձեռքը կ'իյնայ . Ռուսե- րը Տուրուճա գաւառին բոլոր հիւսիսային մա- սին կը տիրեն :

24 . Տաշիկները խել մը պատերազմներու մէջ Ռուսաց յաղթող գտնուելէն վերջը՝ Դանուբին

ձախակողման տփանցը կը տիրեն . բայց ետքը սաստիկ պատերազմով մը՝ ամուս 28ին կը բռնա- դատուին նորէն գետէն անդին անցնելու ու Դոգուբաշ քաշուելու :

25 . Սերայեվոյի մէջ Սուլթանին մէկ հրովար- տակը կը հրատարակուի՝ գաւառական ատեան գաստիարակութեան մը հաստատելու վրայօք . Քրիստոնէայք ու հրեայք կրնան վկայութիւն ը- նել ինչուան Տաշիկներուն գէտ ալ . գաստատան- ները ասկէ ետքը ըստ Ղաւաթ օրինացը պիտի չըլ- լան , հապա ըստ քաղաքական օրինաց :

27 . Գաղղոյ ներքին գործոց պաշտօնէայն Աբիլէս Ֆուլ ծանուցում կ'ընէ ծերակուտին ու օրէնսդիր ժողովոյն յանուն կայսեր . Բեդրպուրկի գահըճին յետին որոշմունքները՝ Գաղղոյ ու Ռուսաստանի մէջ պատերազմը հաստատեն :

Մեծին Բրիտանիոյ թագուհին կը ծանուցանէ խորհրդարանին թէ գաշնադրական խօսակցու- թիւնները Ռուսաստանի հետ կարուած են : Թա- գուհին իբրեւ ինքըզինքը պարտաւորուած կը հա- մարի գործունեայ օգնութիւն մը տալու սուլթա- նին : Անոր համար ինքը յոյս ունի իր հպատակնե- րէն ձեռնառուութիւն գտնելու՝ սուլթանին երկիր- ները պաշտպանելու համար ընդգէտ գրաւմանց Ռուսաստանի :